ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն Հոգեբանություն, 031031.01.6

Որակավորումը Բակալավր

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա 2-րդ կուրս, 3 կիս.,

Վանաձոր

2023 թ.

1.Պրակտիկայի նպատակը

- Ծանոթանալ հաստատության կառուցվածքին, տրամադրվող աջակցություններին, բացահայտել բազմամասնագիտական թիմում հոգեբանի աշխատանքի առանձնահատկությունները, հաստատությունում իրականացվող հոգեբանա-մանկավարժական գործընթացի ղեկավարման, պլանավորման և կազմակերպման աշխատանքների սոցիալ-հոգեբանական գործառույթներին:
- Բացահայտել հոգեբանի պրակտիկ գործունեության առանձնահատկությունները
- Տեսական գիտելիքները կիրառել պրակտիկայում:

Պրակտիկայի ընթացքում ուսանողին հնարավորություն է ընձեռնվում իրական դաշտում ներդնելու ուսումնառության ընթացքում «Ընդհանուր հոգեբանությունե, «Տարիքային հոգեբանություն» «Սոցիալական հոգեբանությունե, «Հոգեախտորոշում» առարկաների շրջանակներում ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքներն ու հմտությունները:

2.Պրակտիկայի խնդիրները

1. Ծանոթացում հաստատության գործունեության բովանդակությանը
2. Ծանոթանալ դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքներին
3. կոլեկտիվի միջանձնային փոխհարաբերությունների սոցիալ-հոգեբանական բնութագրերի առանձնահատկությունների բացահայտում

3. Պրակտիկայի հաստատության վայրը

Պրակտիկան անց է կացվում Վանաձորի N 20 հիմնական դպրոցում:

Ուսանողներիը ծանոթանում են հաստատության առաքելությանը, կառուցվածքին, կառավարման օղակների գործառույթներին, տրամադրվող աջակցություններին, փաստաթղթավորմանը ու դրանց բովանդակությանը: Ծանոթանումկենտրոնի հոգեբանի աշխատանքային գործառույթներին և կիրառվող հոգեբանամանկավարժական մեթոդիկաներին, նրանցառանձնահատկություններին: Ուսումնասիրումկենտրոնում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, բացահայտում հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին: Կազմակերպվում են քննարկումներ խմբերում կատարված դիտարկումների վերաբերյալ:

Տարբեր խմբերում հանդիպումների և խմբային աշխատանքների, սեմինարների, թրեյնինգների, զարգացնող խաղերի կազմակերպում, որոնք ուղղված կլինեն տարբեր սոցիալ-հոգեբանական խնդիրներին:

Պրակտիկայի ամփոփումն ու գնահատումը ղեկավարի կողմից իրականացվում է ուսանողի կողմից իրականացված աշխատանքների փաթեթի տարբեր բաժինների հանրագումարային գնահատականով:

Պրակտիկան ամփոփվում է գրավոր հաշվետվությամբ:

4. Պրակտիկայի ընթացակարգը

«Հոգեբանություն» մասնագիտության հեռակա 2-րդ կուրսի I կիսամյակի ուսումնական պրակտիկայի

	Բովանդակություն
Շաբաթ 1	Ծանոթանալ պրակտիկայի ծրագրին, նպատակին: Ծանոթանալ հաստատության հոգեբանամանկավարժական գործընթացի պլանավորման, կազմակերպման և ղեկավարման աշխատանքների սոցիալ-հոգեբանական գործառույթներին: Ուսումնասիրել խմբում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, բացահայտել հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին,
Շաբաթ 2	Տարբեր խմբերում հանդիպումների և խմբային աշխատանքների, սեմինարների, թրեյնինգների, զարգացնող խաղերի կազմակերպում, որոնք ուղղված կլինեն տարբեր սոցիալ-հոգեբանական խնդիրներին:

5. Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի) պարտականությունները, գործառույթների նկարագրությունը

Հոգեբանության մեթոդիստը

1. Մասնակցում է պրակտիկայի կազմակերպման նախնական և ամփոփիչ կոնֆերանսներին (պլանավորում է համատեղ աշխատանքում ուսանողների և պրակտիկայի մյուս պատասխանատուների հետ)
2. Աջակցում է պրակտիկանտի պրակտիկայի գործունեության ընթացքում կոնկրետ դեպքերի քննարկմանն ու գնահատմանը, երեխա - ծնող - մանկավարժ փոխհարաբերությունների և նրանց խմբային գործունեության վերլուծության և գնահատման ընթացքում իրականացնում խորհրդատվություն, տրամադրում է դիտման, դեպքերի վերլուծության, որակական ուսումնասիրության մեթոդներ
3. Աջակցում է ուսանողի անձնային աճի, հաղորդակցական կարողությունների և մասնագիտական հեռանկարների զարգացմանը՝ դրանց պլանավորման և գնահատման գործընթացում

4. Տրամադրում է նյութեր և խորհրդատվություն, մասնագիտական գործունեության ռեֆլեքսիայի և թիմային աշխատանքի հմտությունների զարգացման գործընթացում

5. Հաստատված ձևաչափով որակապես գնահատում է պրակտիկանտի գործունեության արդյունքները, արժևորում է պրակտիկանտի գործունեությունը՝ ներկայացված դեպքերի, իրավիճակային վերլուծության, պրակտիկայի առաջադրանքների տրամադրման, կատարման ինքնագնահատման արդյունքների հիման վրա

Հաստատության աշխատակից ղեկավարը.

- Ծանոթացնում է հաստատության աշխատակազմին, կարգ ու կանոնին, անհրաժեշտ փաստաթղթերին,
- մասնակցում է պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ խորհրդակցություններին,
- ղեկավարում է ուսանողների աշխատանքը անձի ուսումնասիրման և այլ հոգեբանական հանձնարարությունների առումով, որոնք նախատեսված են պրակտիկայի ծրագրով,
- ընտրողաբար մասնակցում է հետազոտական գործունեությանը, դասերին և արտադասարանային պարապմունքներին, որոնք անց են կացնում ուսանողները, մասնակցում է նրանց քննարկմանը,
- մյուս մեթոդիստների և հաստատության աշխատակազմի անդամների հետ միասին գնահատում է յուրաքանչյուր ուսանողի աշխատանքը,
- հաշվետվություն է ներկայացնում պրակտիկայի ղեկավարին ուսանողների կատարած աշխատանքների վերաբերյալ:

Պրակտիկանտների պարտականություններն ու իրավունքները.

- պահպանել հաստատության աշխատանքային կարգապահությունը,
- մշակել պրակտիկայի անհատական պլանը պրակտիկայի ղեկավարների օգնությամբ
- աշխատել համաձայն հաստատված պլանի, ժամանակին ներկայացնել հաշվետվություն,
- ծանոթանալ հաստատությանսոցիալ-հոգեբանական աշխատանքների պլանավորման, կազմակերպման և ղեկավարման առանձնահատկություններին,
- ծանոթանալ հաստատության հոգեբանի գործառույթներին և կիրառվող մեթոդիակներին,
- ուսումնասիրել խմբում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը
- իրականացնել խմբային աշխատանքներ, քննարկումներ, թրեյնինգներ, զարգացնող խաղեր

- կատարել պրակտիկայի արդյունքների վերլուծություն և կազմել հաշվետվություն

Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը

Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը համարվում է հաշվետվությունը, որտեղ և արտացոլվում է ուսանողի կողմից իրականացված հոգեբանամանկավարժական աշխատանքները, հոգեբանական դիտարկումների արդյունքները:

Կոմպետենցիաների ցանկ,

որոնք «Հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի արտադրական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 031301.1.06 «Հոգեբանություն» ԿԾ-ով

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Ա2. Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը

Ա5. Տարբերակել հոգեկանի և վարքի նորման, շեղումները և պաթոլոգիան

Ա6. Նկարագրել հոգեբանական օգնության մակարդակները, բացատրել դրանց կազմա-կերպման առանձնահատկությունները, թվարկել մեթոդները

Ա7. Ներկայացնել հոգեբանի գործունեության էթիկական նորմերը, գործունեության տարբեր ոլորտներում ներկայացվող պահանջները

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Բ2. Կիրառելու տեսական գիտելիքները և հետազոտական հմտությունները մասնագիտական գործունեության սահմաններում և առօրյայում

Բ4. Մշակելու և կիրառելու զարգացնող և շտկողական աշխատանքների հնարներ և մեթոդներ

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Գ4. Ցուցաբերել տոլերանտություն և համագործակցելու կարողություն